ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ>> ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՍՊ-ՊԸԾՁԲ-16/03>>-180-2016

ք. Երևան <<03>> 08 2016 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիգա պլյուս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Շ.Աղյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 1 148 000 (մեկ միլիոն հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25-ը դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 , N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	«Լիգա պլյուս» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9	Ք. Երևան, Մանուշյան 43/1
Հ/Հ 900011004471	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 02586282	Հ/Հ 2050622046021001
[illegible] բնական վարչություն	ՀՎՀՀ 00125974
[illegible] ղեկավար	Տնօրեն՝
---------- Վ. Էլոյան	---------- Հ. Աղյան
Կ.Տ.	Կ.S.

Հավելված 1
«03» 08 2016թ. կնքված
N ՄՊ-ՊԸԾՁԲ-16/03 ծածկագրով գնման պայմանագրի
180-2016թ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<< Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթի անցկացում
<< Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ >> մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն է՝ բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, հաշմանդամ մարդկանց հասարակությանը ինտեգրման գործընթացի խթանում: Մրցույթն անցկացվելու է մեկ փուլով՝ ք.Ծաղկաձորում: Մրցույթի անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը: Մարզական միջոցառման ծրագիրն իր մեջ ներառում է հետևյալ մարզաձևերը՝ • Շախմատ • Սեղանի թենիս • Շաշկի • Դարթս • Լող • Եռամարտ • Բասկետբոլ Մրցումների անցկացման համար անհրաժեշտ մարզագույքն է՝ • **Բասկետբոլի գնդակ** կաշվե կամ փոխարինող հումքից, N 6 (*5 հատ)* • **Սեղանի թենիսի ձեռնաթի** (ռակետ) պատրաստված փայտից, երեսապատված ռետինե ծածկով (*5 զույգ),* • **Ցանց**՝ գործվածքը սինթետիկ թելից, երկարությունը 170սմ, լայնությունը 15.25սմ, ամրացված մետաղե ամրակներով *(3 հատ*) • **Գնդակ սեղանի թենիսի**՝ պատրաստված պլաստմասայից, չափերը՝ 40մմ տրամագծով, նարնջագույն կամ սպիտակ գույնով (*50 հատ)* • **Դարթս** ՝ պատրաստված է խտացված բուսական մազաթելերի, կամ խտացված բամբակից, թիրախը բաժանված է հատվածների որոնց վրա գրանցված է 1-ից 20 թվեր, նետը պատրաստված է՝ ծայրամասը մետաղե ասեղից և պլաստմասե իրանից: (*3 հատ)* • **Շաշկի** ՝ պատրաստված փայտյա կամ պլաստմասե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասե հումքից շաշկու կլոր քարեր, 2 գույնի, 12-ական հատ: Մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան (*10 հատ)* • **Շախմատ** ՝ պատրաստված փայտյա կամ պլաստմասե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան կամ պլաստմասսե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ)

Մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան (10 հատ)

- **Վայրկյանաչափ՝** պլաստմասսե հումքից Մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան (4 հատ)

Մրցույթի համար նախատեսված՝

- Հավաստագիր (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված թիմերին և անհատներին) չափսերը՝ 30x20սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ Տեքստը համաձայնեցնել՝ ՄՍՖԴՔ վարչության հետ (32 հատ)
- ՀՀ Նախագահի վկայագիր. չափսը՝30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ (48 հատ)
- Շնորհակալագիր մասնակից բոլոր թիմերին և կազմզկերպիչներին, չափսերը՝ 30x20սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ:Տեքստը համաձայնեցնել՝ ՄՍՖԴՔ վարչության հետ (12 հատ)
    - Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղը գրված թիմերին) 65 սմ, 60սմ և 50 սմ բարձրությամբ ոսկեգույն, Էրոնիտե պատվանդանով (3 հատ)
- Մարզադահլիճի ապահովում Ծաղկաձորում (Ծաղկաձորի մարզարազա կամ այլ նմանատիպ մարզադաշտ) և լողավազանի ապահովում (3 օր)
- Շտապ բուժօգնության ծառայության ապահովում մրցումների մասնակիցների և մրցավարների համար (3 օր)
- Մրցավարների համար մարզահագուստ՝ բամբակյա կտորից ամառային շապիկ գլխարկ,գույնը՝ սպիտակ, (հանձնվում է անհատույց սեփականության իրավունքով)(24 հատ)

- Գովազդային նյութերի պատրաստում (ֆոտո, տեսաֆիլմերի, նկարահանում) մրցման օրը
- Այլ ծախսեր՝ տրանսպորտային միջոցներ մարզագույքը տեղափոխելու համար (Երևան -Ծաղկաձոր-Երևան)
- Ձայնային տեխնիկայի ապահովում՝ (բարձրախոս .7 կՎտ հզորությամբ, 2 բարձրախոս՝ առանց լարի, 1-ը՝ լարով, միկշերային վահանակ - (1 օր)
- **Մրցավարական հանձնաժողովի և մրցավարների աշխատանքների ապահովելու համար անհրաժեշտ գրենական պիտույքներ՝**
- Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի (3 հատ)
- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297)մմ ձևաչափի թերթերի համար (20 հատ)
- Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն) 1տուփ՝ (100 հատ)

Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝

- լայնությամբ (տարբեր գույնի) (150 մետր)
- Կպչուն ժապավեն (սկոչ) (3 հատ)
- Թղթե կպչուն ժապավեն 48մմx100մ տնտեսական, մեծ, գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0, 030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ. (3 հատ)
- Թուղթ A4 ֆորմատի1 (21x29.7): A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297) մմ. (2 հատ)
- Գրիչ գնդիկավոր: Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի (10 հատ)

Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ: Հասարակ, սև, համապատասխան

- կարծրությամբ (10 հատ)
- Լազերային տպիչի քարթրիջ՝ HP laser get 1020 1 հատ
- Ապակարիչ գրասենյակային ապակարիչ՝ N10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար (1 հատ)

* Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը

**Անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր (ժամկետները համաձայնեցվում են Պատվիրատուի հետ):

*** Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 22.02.2016թ. N 34-Ա/1 հրամանով հաստատված ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» 2016 թվականի մրցույթի կանոնակարգի պահանջների համաձայն:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	Ավարտը
28.08.2016թ.	31.08.2016թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011004471
ՀՎՀՀ 02586282
Ֆինանսական վարչություն
Պետական գնումների ղեկավար՝

Վ. Էլոյան

ԿԱՏԱՐՈՂ

«Լիգա պլյուս» ՍՊԸ
Ք. Երևան, Մանուշյան 43/1
<<Ինեկորանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2050622046021001
ՀՎՀՀ 00125974
Տնօրեն՝

Հ. Աղյան

Կ.Տ.

Հավելված2
«03» 08 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՀԲ-16/03-ծածկագրով գնման պայմանագրի
180-2016

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	Օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	**«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում**								1148000	1148000	1148000	1148000	1148000	1148000

ՀՀ դրամ

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Աբովյան 9
Հ/Հ 900011004471
ՀՎՀՀ 02586282
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
գլխավոր հաշվապահ՝ կազմի ղեկավար՝
Վ. Էլոյան

ԿԱՏԱՐՈՂ
«Լիգա պլյուս» ՍՊԸ
Ք. Երևան, Մանուշյան 43/1
«Ինեկորանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050622046021001
ՀՎՀՀ 00125974
Տնօրեն՝
Ա. Աղյան
Կ.Տ.

Հավելված 3
«03» 08 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/03 ծածկագրով գնման պայմանագրի
180-2016.

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2016 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
Ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<<____>> _____ 2016 թ. կնքված
N ՍՊ-ՊԸԾՁԲ-16/03 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու)
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն